

Վստահեցե՛ք, երբ միևնույն լինե՛ինք եւ բնապէս աւելի տէր ես պիտի լինե՛ի, քան թէ նա: ուստի Տարօժն սահմանագլուխը իրեն հանդիպելով՝ այս խորհրդածութեամբք խնդրեցի զիս սպասաւոր ընդունիլ. իսկ նա, որ իր միամիտ հարցմունքներով եւ պատասխաններով զիս զուարճացուցեր էր, երբ պարզ կերպով ընդունելով իմ խնդիրքս աւելցուց թէ սուտի եւ անիրաւութեան թշնամի լինելով՝ պէտք էր զգուշանալ այդ բաներէն, վասնզի չէր կրնար ներել եւ անպատիժ թողուլ, ծիծաղս հազիւ բռնեցի, վասնզի ես փորձ էի եւ երեսունը անցած. լաւ՛, շատ լաւ ըսի եւ ընդունեցայ: Մեր դաշնադրութեան երկրորդ օրը Եփրատայ մօտեցեր էինք, գիւղ մը գիշերը օթեւանելով, երբ առաւօտուն իշխանը ձի կը հեծներ, գիւղացի մարդ մը եկաւ գանգտելու թէ ինչպէ՛ս ես անառակութեամբ ուզեր էի բռնի զգուել եւ համբուրել դեռահաս աղջիկ մը, եւ նորա աղաղակներէն բռնադատ եալ միայն թողլու էի պարտաւորել եւ ծանր նախատիքներ ըրած էի տարեց կանանց, որ նորա պաշտպանութեան դիմէր էին. իշխանը որ ես տղայ կը համարէի հանդարտութեամբ ինձ հարցուց, թէ իրաւ՞ է այս ամբաստանութիւնը, իսկ ես քմծիծաղով մը այո, ըսի. վասնզի ո՞վ կրնար վախել այդ աղջկան նման պատանիէն, ան ատեն դարձաւ գիւղացուն ըսաւ. «Հայրիկ, կը տեսնես, որ իմ ծառան սուտ չի զրուցեր, եւ ուրիշ անգամ այդպիսի բան ալ չըներ, ես քեզ կ'ապահովեմ»: Ես ալ հեծա եւ գնացինք: Երբ Եփրատն անցանք, եւ երեկոյի ժամանակ էր, եւ գիւղը ուր պիտի օթեւանէինք մօտ էր՝ հասանք աղբիւրի մը գլուխ ուր մարդ չի կար, տեսնեմ իշխանը ձիէն վար թռաւ, ինձ էլ լրջաբար վար իջնել հրամայեց, ձին ծառի մը կապեց, ինձ նոյնը հրամայեց, ես ալ իմ ձին կապեցի Զէի հասկնար թէ ի՛նչ ըսել կուզեր. բայց երբ տղայական հանդարտութեամբ ըսաւ թէ՛ «Դու խոստովանեցար աս առաւօտ քու յանցանքդ, քու անիրաւութիւնդ, եւ որովհետեւ ես խօսք տուի, որ ուրիշ անգամ այնպիսի չարութիւն պիտի չընես, պէտք է զքեզ պատժեմ»: Եւ հազիւ թէ ծիծաղի ժամանակ ինձ թողլով՝ ձախ ձեռքքը իմ ծոծրակս բռնեց այնպիսի զօրութեամբ, որ կարծեցի թէ երկաթ մը զիս յափշտակեց եւ գետին գարկաւ, ու մէկ ծունկը մեջքիս վրայ դրաւ եւ աջ ձեռքի խարազանով այնպիսի՝ ծեծ մը ինձ գարնել սկսաւ, որ ես շարժելու